A DECADE OF ACHIEVEMENT - ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՏԱՍՆԱՄՅԱԿ

AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ - 2001

11 հոկտեմբերի, 2001 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Աստվա՛ծ օգնական, Վեհափա՛ռ Տեր

Խորին շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրման 10-ամյա հոբելյանի առիթով Ձեր շնորհավորական ուղերձի և օրհնության խոսքի համար: Այն զետեղված է օրերս հրատարակված «Հայաստանի ամերիկյան համալսարան- նվաճումների տասնամյակ» գրքի մեջ և ընթերցվեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի կողմից ավարտական արարողության ժամանակ:

Երախտապարտ ենք, որ ՀԱՀ-ի ձևավորման տարիներից ի վեր Ձեր հոգատար և ուշադիր վերաբերմունքն եք ցուցաբերել համալսարանի հանդեպ: Ուրախ ենք, որ համալսարանի մի շարք շրջանավարտներ իրենց նպաստն են բերում Մայր Աթոռ Ս.Էջմիածնի գործունեությանը:

Վստահեցնում ենք, որ այսուհետ ևս ՀԱՀ-ի գերխնդիրը կլինի Հայաստանի Հանրապետության և տարածաշրջանի զարգացման առաջնահերթություններին արձագանքելը:

Կից ուղարկում ենք համալսարանի 10-ամյակի կապակցությամբ հրատարակված գրքի հայերեն և անգլերեն տարբերակների մեկական օրինակ:

Որդիական ողջույններով՝

Յարութիւն Արմէնեան
ՀԱՀ-ի նախագահ

40 Marshal Bagramian Avenue
Yerevan, 375019, Armenia
Tel.: (3741) 512526, 512525,
Fax: (3741) 151048, 512840

300 Lakeside Drive
4th Floor
Oakland, CA 94612
Tel.: (510) 987-9452
Fax: (510) 208-3576